



ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM
 بطريركية الأرمن القبطية
 PATRIARCAT ARMÉNIEN DE JÉRUSALEM

81 Յուլիս 2000

Ազնուափայլ Տիկին Հայարփի
 (Վարժապետեան) Ղարիպեան
 Ֆիլատելֆիա

Սիրելի Հայարփի,

Իմ հոգեւոր եղբորս, Բարգէն Սրբազանի մահուան լուրը թեւ
 անակնկալ մը չէր, բայց բաժանումի ցաւը ինքնաբերաբար մեր սիրտը կը
 յուզէ:

Քեզի հետ հեռաձայնային մեր խօսակցութեան ընթացքին,
 գոհունակութեամբ մտիկ ըրինք քու ուղիղ եւ քրիստոնէական մօտեցումդ
 եւ արտայայտութիւններդ, ընդունելով որ մեր եղբայրը, մարմինի ցանքէն
 ձերբազատուած, իր յաւիտեական հանգիստին կոչուեցաւ իր Արարիչին եւ
 մեր Տիրոջ Յիսուս Գրիստոսի կողմէ:

Բարգէն Սրբազանին հետ, մեր մանկութենէն սկսեալ, Նրուսադէմի
 ժառանգաւորաց Վարժարանի սեղաններէն, եւ Սուրբ Տեղեաց խնկարոյր
 մթնոլորտին մէջ, սորվեցանք Աստուծոյ ծառայել, եւ մեր Սուրբ Եկեղեցիին
 միջոցաւ՝ նաեւ մեր ազգին զաւակներուն, եւ մարդկային ընկերութեան:

Բազում յիշատաներով, Բարգէն Սրբազան պիտի խօսի, պիտի ժպտի,
 պիտի փաջւերէ, եւ իր բարեսրտութեամբ պիտի խրախուսէ մեզմէ ամէն
 մէկը, որ զինքը մանչնալու առիթը ունեցած ենք, իր նշմարիտ հայու,
 հաւատաւոր մարդու, եւ Գրիստոսի կանչին հետեւող հոգեւոր հովիւի
 նուիրեալ անձին մէջ:

Տերը թող ընդունի մեր եղբոր հոգին, եւ անոր բարի յիշատակներովը
 միտիբարէ մեզ բոլորս:

Սիրոյ Ողջունիւ

Թորգոմ Արք. Մանուկեան
 Հայ Պատրիարք Նրուսադէմի